

ՄԷՏԱՅԸ

ՀԱԳԸԳԷԹ

ՆՈՒՄԵՐՈ 100 ՍՄԸ

ԳԻՐԻՆՃԻ ՄԵՆԷ

2 ՄԱՐՏ 1871

Մէտայը Հաղորդէթ հաֆթատա պիր պէտիւք վէ եէօվիյէ նըսքի նուստէ թերթիպի իլէ նէշր օրուսուր , քէպիր վէ սաղիր նուստէ իլէ պէրապէր պիր սէնէլիյի բէշին , Պէյազ Մէճիպիյէ 7 , Ալթը այլըզը 4 , Իւչ այլըզը 2 1/2 , Քէպիր նուստէսի 40 վէ սաղիրի 20 փարայա ֆիրուսթ օրուսաճազ : Տաշրալար իշին բօսթա իւճրէթի զամմ օրուսուր : Ապօնէ իշին Ղալմթատա երմէնի ֆիրիսէսի սօղաղըքաւ ՆՈ 19 իլէ մուրաղղամ Միւհէնտիսեան մաթսաարնտա Մէտայը Հաղորդէթ օտասրնա միւրաճաթ օրուսաճազ : Իլանաթըն սրասը իլը տէֆա 60 փարա , իքնճի տէֆա 30 զիկատէ նէշր օրուսաճազլարա բազարըք օրուսաճազ :

ԿԷՉԷՆ ԲԱՉԱՐ ԿԻԼԻՆԻ ԱԹԻ ԻԻԼ ԶԻԲԲ
ԿՈՆԴԱԿ ԳԻԼԻՍԷԼԷՐԻՄԻՉՏԷ ԳՐԱՍԹ
ՕԼՈՒՆՄՈՒՇ ՏՈՒՐ :

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՌԱՅ
ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ .

ՊԱՏՐԻԱՐԿ ՅԱՆՆ ԿԻԼԻՆԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅՈՅ ՌԵԼԻԳԻՍԱՌԱՅ ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի
ՍՈՒՐԱ ԳԱՀԷՆ ՀՈՂԱՄԱՅ :

Արհիպապա Նըքարց մերոց Արքեպիսկոպոսայ եւ Նախիկոպոսայ եւ սիրեցեալ Որդւոց մերոց Յ . Կղերց եւ բարեպաշտ ժողովրդեան Աստուածաւանդ Ողջոյն եւ Օրհնութիւն :

Դուք ամենքնիդ ալ , Պատուական եղբարք եւ սիրեցեալ Որդիք , ակնաւ տես վկայ , կամ որպիսի եւ իցէ եղաւ նախաւ տեղեակ ըլլալով աւելորդ է մի առ մի յիշեցնել Ձեզի թէ ժամանակէ մը ՚ի վեր մեր Կաթողիկէ Հայ ազգին մէջ քանի քանի ցաւալի դէպքերու հանդիսատես գտնուած ենք . թէ անոր ուղղափառ հաւատքին մը չափ մեծամեծ վնասներ հասած են ,

եւ թէ քանի վնասուք հոգւոց՝ Յիսուսի Գլխատոսի Տեսն մերոց աշխարհիս փրկութեան համար թափած անգին արիւնը՝ ՚ի սոսկումէ մեր ամենեցուն՝ օտանալիս եղած է անանցմէ , որոնք ՚ի ծոց Միւրջ Առաքելական Հառվմական Եկեղեցւոյ կը վայելէին Անոր փրկաւէտ պտուղները :

Քաջածանթ է Ձեզի թէ ինչպէս մեր կրօնաւոր եւ աշխարհական Եկեղեցականաց մէկ մասը՝ մոռնալով իրենց պարտքերը՝ զոր խոստացան եւ երդմամբ հաստատեցին Սուրբ Սեղանոյն եւ հասարակաց ամենաւ Մօրը Սուրբ Եկեղեցւոյն առջեւ , եւ հակառակ իրենց սորված եւ սորվեցուցած Կաթողիկէ լուսաւոր վարդապետութեան , եղան բուն եւ ճշմարիտ պտու ճառ այսչափ անկարգութեանց , այսչափ ազմուկներու եւ կրօնական բաներուն սա կերպով վեր ՚ի վայր ըլլալուն , եւ ոչ այսչափ միայն . այլ եւ ամեն փայծէ հնարք ՚ի գործ դրին հաւատացելոց մէկ մասը իրենց ի մաստակո թիւններովը եւ կշտամբութեան արժանի օրինակներովը հրա-

պուրելու եւ իրենց մուսուլթեանցը մէջ ձգողելու , որպէս զի բաժնելով Կաթողիկէ Հառվմական Սուրբ Եկեղեցւոյ մայրական ծոցէն՝ գահալէժ գլորեն վանոնք ՚ի խորս հերձուածոց :

Իրենք առ իրենց չարաչար նպատակին մէջ յաջողելու համար մօտան ճամբան , ուսկեց անցեր էին իրենցմէ առաջ եկող հերձուածողները եւ հերետիկոսները , եւ ամեն տեսակ ստութեան եւ զրպարուութեան զննքերը ՚ի գործ գնելով , փրան աւելցնելով նաեւ Եկեղեցւոյ սուրբ կանոնաց եւ ծայրագոյն Գահանայապետաց վճռոց վրայ ամենէն աւելի թիւր մեկնութիւններ , եւ հակառակամարտ խարդախութիւններ , մինչեւ Սուրբ Աւետարանի խօսքերն անգամ չարաչար գործածելու յանդգնեցան իրենց անկարգ եւ անկանոն գործքերը փարիսական կեղծաւորութեան վերաբերելն տակը ծածկելու :

Հոս շատ երկայն կըլլար մէջ բերել մի առ մի առ իրենց ապիրատ գործքերը գլուխ հանելու համար ձեռք

առած ամեն մէկ անարժան միջոցնէրը և հնարքները թէ հրապարակական տպագրութեամբ, թէ մոլորական քարոզութեամբ, թէ ընտանեաց մէջ երկպառակութիւն ձգելով, թէ իրենց գայթակղական համախմբութիւններովը, թէ խառնադանձաղմունքներովը և թէ ամբոխալից յարձակմամբ, որով կը գիտէին գրգռել խուժանին ատեւութիւնը և մոլեգնութիւնը, թէ ընդարձակ ասպարեզ բանալով փառամոլութեան և ասպտամբութեան, թէ անպատէհ եղանակաւ մեր Անձը առակ նշաւակի կացուցանել համարձակելով, թէ մեր օրինաւոր իրաւասութեան դէմ կերպական արհամարհութեամբ անիրաւասութեան՝ կ'ըսեմ, որ Առաքելական Աթոռոյն գերագոյն իշխանութեամբը աւանդուած է մեզի:

Աս խեղճ մոլորելոց հանգամանքը ճշգիւ բացատրելու համար մեր միտքը կուգայ Սաղմոսերգութիւն աս խօսքը՝ որ կ'սէ. « Գերեզման բաց է կռկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն, թոյնք թփից 'ի ներքոյ չըթանց նոցա, որոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի են »:

Աս նոր հերձուածողները 'ի սկզբան հռովմայ անմոլար Աթոռոյն ընծայած պատիր հնազանդութեան երևութին տակ՝ ուղեցին Անոր յենու. Անոր գիմեցին Մեզի դէմ կերպ կերպ տրտունջներ հնարելով, և կը յուսային իրենց ապիրատ նպատակներնուն մէջ յաջողութիւն գտնել: Բայց այն իմաստուն Աթոռը՝ որ երբէք չի շեղիր արդարութեան ճանապարհէն անարդար և անընդունելի ճանչնալով անոնց դատը հաղիւ զոյն մերժած էր, և ահա նոյն ընդ նոյն ապստամբութեան միջոցներու ձեռք զարկին կերպապէս հակառակելով Անոր մեծարգի վճռոցը. որպէս թէ այն վճիռները կրնային անարդար կամ անպատշաճական ըլլալ, և կամ թէ իրենց քմացը յաջմար վերաձեռել և սահմանի տակ փակուիլ:

Եթէ ասոնք իրենց ապստամբութիւնը

թիւնը իջ ճշմարիտ կերպարանքովը ըստ ամենայն պարագայից յայտնած ըլլային, կրօնական բաներու քիչ համու եղիլ բարեսիրտ ժողովուրդը չէին կրնար շահիլ իրենց չար գիտմանցը. այնպէս որ՝ եթէ խեղճ ժողովրդեան մեծ մասը ճանչցած ըլլար ամբողջացած ապստամբութիւնը իր ամեն կերպարանքովը, անշուշտ կը խորշէր անկից, և հետեւելով իր նախնեաց շաւղացը, հաւատարիմ և հլու կը մնար Առաքելական Աթոռոյ Սրբոյն Պետրոսի: Բայց և այնպէս այս նոր հերձուածողները չեն գիտեր ինչ ընելիքնին որ գոց պահեն ժողովրդեան աչքը, որով իսկ ձգձգութեան անոնք յախուռն վիճակի մէջ, յորում կը կարծեն զիրենք կաթողիկեայ, կը հռչակեն զիրենք կաթողիկեայ, եւ թէ ինչ ալ որ ըլլայ՝ իրենց խօսքին նայելով, կը գտնուին կաթողիկէ եկեղեցւոյն մէջ:

Պարագի ելան իրենց եղած ամեն կերպ ապացուցութիւնք՝ թէ կաթողիկոսութիւնը ըստ հաճոյից՝ այսինքն ըստ առանձնական կարծեաց յօրինուած կրօնք մը չէ. և Հռովմէական Սուրբ եկեղեցւոյն հակառակ կերպական անհնազանդութեամբ չկրնար մէկը կաթողիք ըլլալ կամ կաթողիք համարուիլ: Վաճն զի քահանայապետական բաւնադրանք կաթողիկէ եկեղեցւոյ դրկէն կերպապէս մերժուելով և բաժնուելով ոչ ոք կրնայ կաթողիկ ըմբռնուիլ, կամ մտածուիլ և կամ ընդունուիլ: Աս հերձուածողաց համար շատ ցաւալի և միանգամայն վնասակար են այսպիսի ցուցմունքներ: Իրենք կը պնդեն կաթողիկ ըլլալ՝ կաթողիկէ ճշմարտութիւնները ամբողջ չընդունելով ալ, 'Քրիստոսի փոխանորդին չը հնազանդելով ալ բանադրանքի տակ՝ այսինքն կաթողիկէ եկեղեցիէն մերժուած ըլլալով ալ: Ասոնք բռնի կուղեն կաթողիկ ըսուիլ: Աղեկ զրուցեց Առաքելալը այսպիսիներու համար, և սեւել թէ՛ խոստանան զիսել զլիստուած, և գործովք իւրեանց ուրանան. . . Եթանայն գործս բարեաց անպիտանք. Տիա. Զ. 16:

Եւ այնպիսով. Տիա. Զ. 16:

Ասանկ օտարոտի և նորաձեւ ընթացք մը պէտք չէ որ զձեզ զարմացնէ. աս տեսակ աղանդը 'Քրիստոսի եկեղեցւոյն մէջ երեցած աղանդներուն առաջինը չէ, Յանտենեանց պատմութիւնը աչքէ անցուցէք. և շուտով կ'իմանաք որ այս նոր աղանդը ճշգիւ նոյն Յանտենեանց գաղափարին վրայ յօրինուած է այսօրուան օրոմեր ազգին մէջն ալ: Յանտենեանց ալ իբր երկու դարէ 'ի վեր կրօն և կը հռչակեն առաջի աշխարհի թէ կաթողիք ըլլան, բայց և այնպէս իսպիւռ տիեզերաց սփռուած բոլոր կաթողիկոսութիւնը՝ իբր հերձուածող, հերետիկոս, նղովեալ՝ կը խորշի անոնցմէ: Ինչ զարմանք է ուրեմն եթէ յիշեալ աղանդին մոլորութիւնները նորոգուած ըլլան նաև մեր նոր հերձուածողաց մէջ:

Աւելորդ է ըսելը թէ քանիցս բարի զգացմունքը բանը և իրական գործքերը յեղաշրջելով և որչափ անդամուրիչ անլուր և անպատէհ խօսքերով աս հերձեալ եկեղեցականք իրենց կախակայուելէն և հերձուածող հրատարակուելէն ետեւ՝ պնդեցին զիրենք ջատագովելու մէջ տեղ բերելով ստալյոգ պատճառանքներ, խուսափական դարձուածներ, որպէս զի նանրացը նեն, խախտեն իրենց տրուած եկեղեցական դատաւնիքները, որ ետքէն սարսափելի սրբապղծութեամբ և յայտնի գայթակղութեամբ մատուցանեն սրբանուէր պատարագին անարիւն զոհը, և մատակարարեն ամենաոտուր խորհուրդները: Չպատկառեցան միամիտ ժողովրդեան մէջ հռչակելու թէ քահանայապետական վեճիւնները առանց ծայրագոյն քահանայապետին գիտութիւնը կը խրկուէին մեզի, թէ անի սուտ տեղեկութիւններէ խաբուած է. և կամ թէ նոյն ինքն քահանայապետը իր բաղմամբայ հասակին համար զառամեալ է. թէ հաւատոյ տարածման Սուրբ ժողովքը վարձուած է, թէ յարգելի առաքելական Գեր. նուիրակը մե-

դի հետ միանալով՝ խաբած է թէ բոլոր հռովմ, թէ բոլոր կոստանդնուպոլիս և թէ ուրիշ շատերը . չըսեմ ցընորք, այլ թէ այս կերպ մեծ եղեռն չարիք անարժան են հերքման :

Հոս բառական ըլլայ միայն հարեանցի մը խորհրդածել որ եթէ հռովմայ՝ բարձրագոյն վճիռները չկրնային ունենալ ուրիշ ուժ, ուրիշ արժէք՝ բաց անկեց զոր կրնայեն անոր աս հերձուածողները, ուր կը մնար և ուր չափ ծանրութիւն կունենար Յիսուսէ Գրիստոսէ կարգուած աննահանջելի իշխանութիւնը : Ուրիշ որ անձ է և ինչպէս կրնային կրօնական խնդիրները լուծուիլ : Որմէ և ինչպէս կրնային մոլորութիւնները գատապարտուիլ :

Ինչպէս կրնար տիեզերական եկեղեցին իր երեւելի գերագոյն գլխոյն միակ կառավարութեան ներքեւ կարգաւորուիլ, և ինչպէս կրնար եկեղեցւոյ միութիւնը պահուիլ : Տարի մը առաջ աս նոր հերձուածողները աս կերպ անիրաւութիւն կրնէ՞ ինարդեօք հռովմայ Սուրբ եկեղեցւոյն . ոտքի տակ կառնուին արդեօք Տարածման հաւատոյ ժողովքին խոհական կարգադրութիւնները . և կը մկրտեցընէին արդեօք աս կերպով պարզա միա ժողովուրդը : Այսպէս արդեօք սորված էին երբ յեկեղեցականութիւն կը գատախորհուէին :

Ասանկ արդեօք երգուընցան սուրբ ստորձաններու բարձրացած ատենն ինն : Բայց գող մը ձգենք աս արհաւրաց վրայ, անոնցմէ ի գործ դրուած ուրիշ ծայրայեղութեան մընալ ահ նարկութիւն ընելու համար . սրուն դէմ գլխաւորապէս ուղղուած է այս մեր հովուականը բոլոր մեր հաւատա ցելոց առջև :

Մեր Ժողովրդեան մէջ աս նոր հերձուածողները բաւական չսեպելով հակառակ կաթողիկէ վարդապետութեան՝ հաւաստի նոր Դասանութիւն ճշտելիս և գաւանիլ, բաւական չըսեպելով ուրանալ Քրիստոսի փոխանորդին բարեկարգական նիւթերու մէջ ընդ սփիւռս տիեզերաց սփռու

ած կաթողիկոսութեան վրայ ընդհանրապէս և ի մասնաւորի ունեցած գերագոյն իշխանութիւնը՝ ինչպէս նաև անոր անմոլար վարդապետութիւնը՝ որ վատիկանեան Տիեզերական Ժողովքին մէջ հռչակուեցաւ, խանդարելով եկեղեցւոյ ողջամիտ վարդապետութիւնը և հաւատացելոց բարի զգացմունքը, վեր ի վայր ընելով ստորակարգութեան սկզբունքը, խորտակելով եկեղեցական օրինաւոր իշխանութեան լուծը, անարգելով անոր անընդդիմանալի իրաւունքները, և վերջապէս յանցանք յանցանքի վերաւելցնելով չարաչար և յանդուքըն ծայրայեղութեամբ մը Ժայհեցան Փետրուար 13 ին ընտրել բարձրացնել և հռչակել ի Պատրիարք Կիլիկիոյ Պահտիար անուն հերձուածող եպիսկոպոսը . որ եւ մեր Պատրիարքական տիտղոսին հետ անուննիս ալ յափշտակել ուղեց՝ անուանելով զինքը Պետրոս Թ :

Անեկեայ է թէ ընտրութիւն մը և բարձրացուցում մը որ կ'ըլլայ այնպիսի անհատներէ, որոնք ամեն տիտղոսէ, ամեն իրաւունքէ զուրկ մահաւանդ թէ եկեղեցական գատակնիքներէ, կախարչութեամբ և բանաբանօք արատաւորեալ ըլլալէն զատ՝ նոյն իսկ կաթողիկէայ միութեանէն մերժուած են, բացարձակապէս անվաւեր, ապախտ և ոչինչէ ըստ ամենայն իմացուածոյ : Որ և իցէ Աթուրի մը օրինաւոր գահակալին կենդանութեան ատենը երբէք տեսնուած չէ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ որ մէկ ուրիշ մը կարող ըլլայ օրինաւորապէս փոխանակել անոր տեղը իր կամ ուրիշին հաճոյիւքը, ուր որ ի բաց կ'առնուին եկեղեցւոյ կանոնները և Սուրբ աթուոյն իշխանութիւնը : Եւ ով ոք այնպիսի յանդգնութեան մը կը հասնի յափշտակելու և բռնի սպրդելու ուրիշին Աթուր, կաթողիկէ եկեղեցին ուրիշ կերպով չքմբռներ, չմտածեր և չանուաներ այնպիսին . եթէ ոչ Քրիստոսի խօսքին համեմատ « իբրեւ գող և աւազակ »

որ ոչ դռնէն այլ լուսամուտէն կը մտնէ, ըսել է ապօրինաւորապէս, անիրաւաբար, նենդութեամբ, անբարըշտութեամբ և անվաւերաբար :

Վասն որոյ մենք՝ թէպէտ և առանց ինչ արժանեաց, ըստ կանոնի օրինաւորապէս ընտրուած ենք ազգային Ուղղափառ Արքեպիսկոպոսներէն և Եպիսկոպոսներէն, որոնք Կիլիկիոյ Պատրիարքական Աթուոյն կը վերաբերին, և նոյն իսկ ան երեք արքեպիսկոպոսներէն՝ որոնք այսօր մեզի դէմ կ'անիրաւին, և որոնք արդէն հռովմէական Սուրբ Աթուոյն և հետեւաբար կաթողիկէ եկեղեցւոյ հաղորդութեանէն մերժուած են, և ետքէն Քրիստոսի փոխանորդ Պիոս Թ . Բահանայապետին դերագոյն իշխանութեամբ հաստատեալ ենք ի պատրիարքական Աթուր Կիլիկիոյ, զոր իբրեւ չորս տարիէն ի վեր կը վայելենք՝ պահելով մեր Պատրիարքական իրաւաբանութեան տակ բոլոր կոստանդնուպոլսի և բոլոր մեր Պատրիարքական թեմին կաթողիքները :

Կը բարձրացնենք մեր ձայնը և կը բողբենք բռնի մոծեալ Պահտիար եպիսկոպոսին դէմ, և կը յայտնենք թէ նախ և առաջինքը և իրեն գործակից միւս երեք եպիսկոպոսունքը, նաև ան ամեն քահանայք և որոնք կամ խորհուրդ տալով, կամ օգնելով և կամ ուրիշ ո՞ր և իցէ կերպով մասնակից եղած են յիշեալ անարգար, անիրաւ Գապօրինաւոր և ապախտ ընտրութեան . ասոնց ամենքն ալ արդէն ի սուրբ Կանոնաց արտած Բանաբանաց քաղ ընկած են, ան բանադրանաց որոնք ի մասնաւորի Հռովմայ Կահանայապետներու վերապահած են :

Սպրդեալ Պահտիար եպիսկոպոսը չկրնար արածել Քրիստոսի հօտը . որովհետեւ չէ ստացեր, Հովուի յատկութիւնները :

Անոր ետեւէն չեն կրնար ընթանալ ոչխարները . ինչու որ ինքն իսկ խոտորեալ է ի շաւիղս կորստեան : Ինչ որ ինքը ուզէ բաղել, աւելի ևս սէրտիւ կը կապէ Աստուծոյ ատենին

առջև : Իրեն կարծեցեալ օրհնութիւնքը՝ երկնից բարկութիւնը կը շարժեն , ոչ թէ պիտի թիւնը՝ « եւ աղօթք նորա իմեղս դարձցին : Սաղմ ծը , » հաւատացեալ ժողովուրդը « մի լու իցէ ձայնի նորա » :

Ի վախճանի մեր եռանդագին աղօթքները կը վերնածայեք յերկնս որպէս զի անարատ Սուրբ կուսին և մեր պաշտպան Սուրբ Գրիգոր Լուսաւորչին և ամենայն Սրբոց արդեանց և բարեխօսութեան հետ մէկ տեղ մեզմացունէ Աստուծոյ ցափումը և արգարութիւնը : Սուրբ հաւատոյ ճառագայթներն լուսաւորեն ամենուն միտքը , սէրը և համաձայնութիւնը ըլլան առաջնորդ մեր առաքելներու գործողը , խեղ և աստիճանութիւնը մեր մէջէն հեռանան . « մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհաց նորա , զի ընկալցուք զսրբմութիւն և դտցուք շնորհս ի դէպ ժամանակիօգնականութեան » :

Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ ի վեր է քան զամենայն միտս , իջցէ ի վերայ ձեր և հանգիցէ միշտ ընդ ձեզ՝ Ամէն :

Տուեալ ի Կոստանդնուպօլիս՝ ի Կաթողիկոսարանս ի 25 աւուր Փետրուարի 1871 ամի :

Մեր Պատրիարքութեան չորրորդ տարին :

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ. Պ. Կ.

ԹԵԼԵԿՐԱՖԻՅԷ

Լօնտրա 9 մարտ :

Պահրի սկսած մէտէիտիւնէ տայիր գօնֆերանդին ագտը զէմանընտա տիւն տէն պերու Բուսիա իսթիգրաղընն տէֆթէրինին աջըլաղընն պօրսաւ տա պիր բրօթլ սթօնամէ զուհուր իթմիշ տիր : Մէղքիւր բրօթլսթօտա Բուսիա իսթիգրաղընտան իտէ Ամէրի գա իսթիգրաղընն էվա թուրուկ մասը պէյան զըլնմըշ տըր :

Պանգէրլէրին էքսէրիսի Բուսիա

իսթիգրաղընտան հիտէ ալմագտան կէրի չէքիլմիշ տիր :

Եարնն գօնֆերանդին տիկէր պիր ագտը թէճէմիւ իտէճէք տիր :

Վիէննա 10 մարտ սաթ 7. 45 ախշամ :

Ֆրանսա թախթընա վէրաթէթ հուգուգուհտան Պօնաբարթ սիւսլէսինին թարտ վէ բէտտ օլունուղըննա տայիր ումում մուրախաւա մէճլիսինին վէրաթիլ Գարարա Գարըր վէ պու գարարըն նահագր վէ մուղայիրի նիղամ պիր գարար օլունուղըննա միւպէյին , վէ Ֆրանսըղ միլէթի նին հուգուգուհտա թէպէյլիւն իթտիրէն եալընը պիր Բէպիսթ մատաէսի օլունուղ , Նարօլէօնուն տախի հիւքիւմէթի իշ պու էտա իւղէրինէ պինա օլունմուն իտուկինտէնպու պոպտէ միլլէթին ըյլինէ միւրաճաթ օլունմասը հագընտա , սապըգ իմրէրաթօր Նարօլէօնուն պիր բրօթլ սթօնամէսինի Լօնտրա զաղէթալէրի իլան իթմիշլէր տիր :

Բարիդ 10 մարտ 7 ախշամ :

Լա Քլոս նամ զաղէթա Բօշֆօրուն վէֆաթ իթտիլինի պիւրիթիր : Լայիպէրթէ տախի Բիւթօյեա եազըն մահալտէ վուգու պուլուն պիր չըմէնաթէր գաղաղընտան էօլմիւշ տիւր տէր , պունուն իլէ պէրապէր օթուղ գատար թէլէֆ վար օլունուղընն օլունուր :

40.000 գատար մօպիլ Բարիդի թէրք իթմիշլէր տիր . չէհէր բահաթ տըր : Պօրսա կէվէք տիր :

Լօնտրա 11 մարտ :

Ջաննը ումումիլէյէ նիւպէթէն ճիւմաա կիւնիւ գօնֆերանդ թէճէմ միւ իթմէմիշ օլունուղ , եագընտա հանկը կիւն թէճէմիւ իտէճէյի նամալիւմ տիր : Բարիդին ումումըն իտուսուսու սուլէ թարիքինի իթիլամ իթմէքաէ տիր . Մօնմարթըն մուհաֆաղպը միլլէտաթէրի թօրլարընը հիւքիւմէթէ թէպիւմ իթմիշլէր տիր :

Տիւն Նարօլէոն Քիւլհիւրտթէ պէրլէնիլմէքաէ իտի . միւշարիլէյ

մարտ 9 տա թէրք իթտիլի վիլհէմհօհէտէն տօղրուտան տօղրույա օրպա կէլիօր իտի :

Բարիդ 11 մարտ էյլէն ,

Նէ Մօնմարթընա նէ տէ սայիր հէվալիսինտէ եէնի պիր վուգուաթ եօգ տուր : Բարիդին սայիր մահալլէրինտէ ապալիլէ քեամիլէ հիւքիւմ իթմէքաէ տիր : Բօշֆօրուն վէֆաթը մատտէսինի զաղէթալար եալանա չըգարմագտա տըրլար :

Թէշքիլ օլունան հարպ տիվա նընտա հոկտեմբեր 31 վուգուաթընը թէֆթիլ իտէրէք , Պլանքի , Էօնլէն , Լըվրէօ վէ Դիլիլ քէնտիլէրի հապըր օլմատըգլարը հալտէ էօլիւմէ հիւքիւմ օլմունչար տըր : Դուրիլ իքի սէնէ վէ վալլէ ալթը մահ մահպուսէ հիւքիւմ օլունարագ , պապ իլէրի սէրպէսթ պըրաղըմըշ տըր :

Վիէննա 11 մարտ սա . 9-10 ախշամ :

Բէսթի զաղէթալար , Բուսիա իլէ Բրուսիանըն հիւքիւմէթ սիւսիլէլէրի նին իթթիֆաթընն թարաֆէյն տհալ լիլէրինին մէնաֆիի սւմումիլէսինէ մուղայիր օլաճաղընը իտալթա գալգընը , Բուսիանըն պու զաղէթալէր զիւսմիւնմէ շարգ մսէլէսինին հալու թէսվիլէսինէ հագր ու սէլահիլէթի օլամպաճտոյ տըր . Աւսթիլայա կէլինմէ , պունուն բօլիթիգատը Բուսիանըն թիւրքիա իւղէրինէ զալէպէյի նուֆուղունա հէր վէճէ իլէ մուղա վէմէթ իտէճէյինէ տայիր տիր :

ՖՈՆՏՕ ՖԻՅԱԹԼԱՐԸ

ՂԱԼԱԹԱ ՊՕՐՍԱՆԸ

Գարանար 1 Մարտ	47 34
Այլտը 2	47 36

ՍԱՀԻՊԻ ԻՄԹԻՅԱԶ ՎԷ ՄԵՍՈՒԼԸ ՂԱԶԷԹԱ ՄԻԲԱՅԷԼ ԷԲՄԷԲՃԵՈՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԻԼԷՆՏԻՍԵԱՆ

ՂԱԼԱԹԱ

ՀՅՈՑ ԵՆԴԵՑԻՑ ՓՈՂՈՑ ԹԻԻ 19 ՎԵՐԻ ԵԱՐԿ